Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 011303303, 010461841
info@samc.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ 4/04-617 03.11 2023թ.

# ՈՐՈՇՈՒՄ

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ում /այսուհետ՝ բժշկական կենտրոն/ 2023 թվականի կարիքների համար մատակարարված ապրանքների՝ պայմանագրերով նախատեսված տեխնիկական բնութագրերի համապատասխանության ընթացիկ ստուգման արդյունքում պարզվել է, որ բժշկական կենտրոնի և «Ս.Ա.Վ.ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 27.01.2023թ. կնքված հ. ՍԱԲԿ-ԲՄԱՊՁԲ-23/2-4 պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 105-րդ չափաբաժնով մատակարարված մեկանգամյա օգտագործման բժշկական խալաթը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրին: Մասնավորապես՝ Պայմանագրի Հավելված-1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 105-րդ չափաբաժնով ձեռք բերված մեկանգամյա օգտագործման բժշկական խալաթի /այսուհետ՝ խալաթ/ տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ խալաթը նախատեսվում է մեկանգամյա օգտագործման համար, չախտահանված, պատրաստված ոչ գործվածքային նյութից, չափը՝ մեծ, գույնը՝ կապուտ (սպիտակ մանժետով), քաշը՝ 110 գրամ (Կտորի քաշը՝ 38 գրամ/մ2) ձեռքերի վրա մանժետներով, կապիչը՝ գոտկատեղում, չափը՝ L կամ XL, ըստ պատվիրատուի պահանջի: Գույնը՝ ըստ պատվիրատուի պահանջի: Պետք է լինի նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ը:

Սակայն մատակարարված խալաթի՝ ընտրանքային կարգով վեցրած նմուշի ստուգման արդյունքում պարզվել է, որ խալաթի ընդհանուր քաշը կազմում է ընդամենը 39 գրամ /ինչը արդեն իսկ նշանակում է, որ խալաթը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով նախատեսված խտությանը և գործվածքին/, թևերի դաստակների մասում բացակայում են մանժետները, գոտկատեղի կապիչները կապելու ընթացքում հաճախ պոկվում են, շուտ և հեշտությամբ խալաթը պատռվում է, գույնը սպիտակ է, ինչի մասին բազմաթիվ բանավոր բողոքներ են ներկայացվում այն օգտագործող բաժանմունքերի կողմից: Հաճախ կարիք է լինում 2-րդ խալաթի օգտագործման՝ առաջինի՝ դեռ չօգտագործված լինելու դեպքում էլ վնասվելու արդյունքում:

Վերոնշյալի կապակցությամբ «Ս.Ա.Վ.ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ Արման Մարտիրոսյանը սույն թվականի հոկտեմբերի 5-ին հրավիրվել է բժշկական կենտրոն՝ վերջինիս ներկայությամբ խալաթի նմուշի համապատասխանության

ստուգման նպատակով, կատարվել է խալաթի կշռում, մանժետների առկայության ստուգում և կազմվել է համապատասխան ակտ, որը սակայն լիազոր ներկայացուցիչ հրաժարվել է ստորագրելուց և այդ մասին ակտում կատարել է նշագրում «Չեմ կարող ստորագրել»:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 կետի «բ» կետը, 2.1.8 կետը և հաշվի առնելով, որ խալաթներն օգտագործվում են վերակենդանացման բաժանմունքում և բուժառուների այցելուների կողմից, «Ս.Ա.Վ.ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրամադրվել է ողջամիտ ժամկետ անհատույց փոխարինել անպատշաճ որակի ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով և վճարել Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

«Ս.Ա.Վ.ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից տրված ողջամի ժամկետներում ներկայացված խալաթի նոր նմուշները անցել են անցել են համապատասխան ստուգումներ /կշռում, գոտկատեղի կապիչները ամրության, կտորի խտության և այլն ստուգում/ և նույնպես դիտարկվել են անհամապատասխան պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ 2023 թվականի հոկտեմբերի 23-ին հ.4/04-576 գրությամբ «Ս.Ա.Վ.ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն sav.group@mail.ru էլեկտրոնային հասցեին ծանուցվել է հ.ՍԱԲԿ-ԲՄԱՊՁԲ-23/2-4 պայմանագրի միակողմանի մասնակի լուծման, ծանուցումը 2023 թվականի հոկտեմբեր 24-ից հրապարակված է նաև https://gnumner.minfin.am/ կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը: Իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 31-րդ կետի 17-րդ ենթակետի «դ» կետի համաձայն՝ կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ «Ս.Ա.Վ.ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, «Ս.Ա.Վ.ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին օրենքով սահմանված կարգով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ